ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

« 09 » Հոկտեմբերի 2021 թ. N 171-Ա/Լ

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ, ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՁԵՎԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 700-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի դեկտեմբերի 26-ի N 1978-Լ որոշման N 2 հավելվածի 10-րդ կետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող շահառուների նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման, համապատասխան մարմիններին իրազեկման և բռնության ենթարկված անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

ՀՀ, Երևան 0010, Կառավարական տուն 3, հեռ.՝ (+374 10) 520 830, www.mlsa.am, info@mlsa.am

2) Շահառուների նկատմամբ իրականացված բռնության դեպքերի գրանցամատյանի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի.
3) Կազմակերպությունում շահառուների նկատմամբ իրականացված բռնության դեպքերի վերաբերյալ հաշվետվության ձևը՝ համաձայն N 3 հավելվածի.
4) Բռնության ենթարկված շահառուի սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագրի ձևը՝ համաձայն N 4 հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) Կազմակերպությում տնօրենի հրամանով նշանակվում է շահառուների նկատմամբ բռնության դրսևորման դեպքերի հայտնաբերման, կամխարգելման, նման դեպքերի գրանցման և դրանից բխող գործընթացների իրականացման համար պատասխանատու անձ.
2) սույն հրամանի դրույթները տարածվում են նաև Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայության ներքո գտնվող, ինչպես նաև ենթակայության ներքո չգտնվող, սակայն ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով դրամաշնորհի տրամադրման պայմանագիր կնքած՝ տարեց և (կամ) հաշմանդմություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպությունների վրա:

3. Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատությունները, ինչպես նաև նախարարության հետ դրամաշնորհի տրամադրման պայմանագիր կնքած՝ տարեց և (կամ) հաշմանդմություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրող բոլոր կազմակերպությունները, յուրաքանչյուր եռամսյակի ավարտից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն են ներկայացնում սույն հրամանի 1-ին կետի 3-րդ ենթակետով հաստատված ձևին համապատասխան հաշվետվություն:

11/9/2021

X

ՆԱՐԵԿ ՄԿՐՏՉՅԱՆ

ՆԱԽԱՐԱՐ՝ Signed by: MKRTCHYAN NAREK 3014890804 **Ն.ՄԿՐՏՉՅԱՆ**

Հավելված N 1
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2021 թ. 09 նոյեմբերի ի N 171-Ա հրամանի

ԿԱՐԳ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՄԲ ԳՈՐԾՈՂ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋՕՐՅԱ ԽՆԱՄՔԻ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՏԱՐԵՑ ԵՎ (ԿԱՄ) ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ, ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության ենթակայությամբ գործող բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի հաստատություններում, ինչպես նաև նախարարության հետ դրամաշնորհի տրամադրման պայմանագիր կնքած՝ տարեց և (կամ) հաշմանդամություն ունեցող անձանց շուրջօրյա խնամքի ծառայություններ տրամադրող կազմակերպություններում (այսուհետ՝ կազմակերպություններ) բնակվող անձանց (այսուհետ՝ շահառու) նկատմամբ բռնության դեպքերի հայտնաբերման, կանխարգելման, համապատասխան մարմիններին իրազեկման և բռնության ենթարկված անձանց հետ սոցիալ-հոգեբանական աշխատանքների իրականացման հետ կապված հարաբերությունները:

2. Կազմակերպություններն իրենց գործունեության ընթացքում ղեկավարվում են մարդու և քաղաքացու իրավունքները և ազատությունները պաշտպանելու և մարդու արժանապատվությունը հարգելու վերաբերյալ հիմնարար սկզբունքով:

3. Սոցիալական աջակցություն տրամադրելիս, կազմակերպության աշխատակազմը պետք է իրազեկված լինի բռնության ցանկացած դրսևորումներից (ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական) և անուշադիր, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքից և սոցիալական մեկուսացումից ու անտեսումից պաշտպանելու՝ ընդունված մեթոդներին ու մեխանիզմներին:

4. Կազմակերպությունների տնօրենները պետք է ապահովեն կազմակերպության աշխատողների (բժշկական անձնակազմ և այլ մասնագետներ) մասնակցությունը բռնության տեսակների, դրանց հայտնաբերման, այդ դեպքերի կանխարգելման թեմաներով կազմակերպված դասընթացների, սեմինարների և այլ իրազեկման միջոցառումներ:

Իրազեկման նման միջոցառումներ պետք է կազմակերպվեն նաև կազմակերպության շահառուների համար:

II. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻՆ ԻՐԱԶԵԿՈՒՄԸ

5. Կազմակերպություններում շահառուների նկատմամբ ենթադրյալ բռնության դեպքերը կարող են հայտնաբերվել հետևյալ միջոցներով՝

1) բռնության ենթարկված անձի կողմից տեղեկատվության ներկայացման,

2) բռության դրսևորման դեպքին ականատես այլ շահառուի կողմից տեղեկատվության ներկայացման,

3) կազմակերպության աշխատողների ինքնուրույն իրականացրած աշխատանքների արդյունքում՝ մասնագիտական մեթոդների կիրառման շնորհիվ, կամ դեպքին ականատես լինելու վերաբերյալ տեղեկատվության ներկայացման,

4) շահառուի հարազատի, բարեկամի կողմից տեղեկատվության ներկայացման,

5) այլ կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց հաղորդումների, ահազանգերի, դիմումների, զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների և այլն:

6. Շահառուների նկատմամբ յուրաքանչյուր ենթադրյալ բռնության դեպքի վերաբերյալ տեղեկատվության ստանալուց հետո, կազմակերպության ցանկացած աշխատող, ով ստացել է այդ տեղեկատվությունը, կամ ինքն է ականատես եղել նման դրսևորման, պարտավոր է անհապաղ այդ տեղեկատվությունը փոխանցել կազմակերպության տնօրենին կամ այդ գործընթացն ապահովելու համար տնօրենի հրամանով պատասխանատու նշանակված աշխատողին (այսուհետ՝ պատասխանատու), իսկ այն դեպքում, երբ դեպքը տեղի է ունեցել ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային ժամից հետո, դրա մասին անհապաղ տեղեկացնում է կազմակերպության օրվա հերթապահին (այսուհետ՝ հերթապահ)՝ հետագա գործընթացն ապահովելու համար:

7. Սույն կարգի 6-րդ կետում նշված տեղեկատվությունն ստանալուց հետո, կազմակերպության պատասխանատուն, անհապաղ դեպքի վերաբերյալ տեղեկատվությունը գրանցում է սույն հրամանով հաստատված ձևին համապատասխան գրանցամատյանում և կազմակերպում իրավիճակի ուսումնասիրություն՝ տեղեկատվությամբ հայտնի դարձած ենթադրյալ բռնության դեպքի հանգամանքները բացահայտելու, բռնության առկայության փաստը, կամ դրա բացակայությունը հաստատելու նպատակով:

Եթե բռնության դեպքի մասին պատասխանատուն տեղեկանում է ոչ աշխատանքային օրերին կամ աշխատանքային ժամից հետո, գրանցամատյանում դեպքի վերաբերյալ գրանցումը կատարում է հերթապահը, իսկ մնացած գործընթացն ապահովում է պատասխանատուն առաջին իսկ աշխատանքային օրվա ընթացքում:

8. Եթե բռնության ենթարկված շահառուի արտաքին ուսումնասիրության արդյունքում առկա են ակնհայտ ֆիզիկական բռնության հետքեր և նրա մոտ առկա է ցավի զգացում, կազմակերպության տնօրենը կամ պատասխանատուն, անհապաղ տեղում կազմակերպում է շահառուի բուժզննությունը և նրան բուժօգնություն տրամադրելու գործընթացը, միաժամանակ դեպքի մասին անհապաղ գրավոր իրազեկում է ոստիկանության տարածքային մարմին:

9. Ոստիկանության տարածքային մարմին անհրաժեշտ է դիմել նաև այն դեպքում, երբ առկա չեն ֆիզիկական բռնության հետքեր, սակայն դեպքը պարունակում է առեւնույթ հանցագործության հատկանիշների առկայության վերաբերյալ կասկածներ:

10. Բացի ստացիոնար բժշկական կազմակերպություններում բուժման և և ոստիկանություն իրազեկման անհրաժեշտության դեպքերի, մնացած դեպքերում, ստացված տեղեկատվությամբ հայտնի դարձած ենթադրյալ բռնության դեպքի հանգամանքներն պարզելու համար ուսումնասիրությունն իրականացվում է կազմակերպության համապատասխան մասնագետների կողմից՝ բժիշկ, հոգեբան, սոցիալական աշխատող՝ յուրաքանչյուրն իր մասնագիտական մեթոդների (դիտարկում, զննում, հարցազրույց և այլն) կիրառմամբ: Աշխատանքները կարող են տարվել ինչպես միանձնյա, այնպես էլ՝ բազմամասնագիտական թիմով:

11. Կազմակերպությունում իրականացված ուսումնասիրության արդյունքում բազմամասնագիտական թիմը կամ առանձին մասնագետները հարցազրույցի և դիտարկման մեթոդով պարզում են շահառուի նկատմամբ բռնության դեպքի՝ իրականությանը համապատասխանելու կամ չհամապատասխանելու հարցը, և ըստ այդմ՝ ներկայացնում եզրակացություն հետագա գործընթացի վերաբերյալ:

12. Եթե ուսումնասիրության արդյունքում բացահայտվում է, որ շահառուի նկատմամբ բռնության դրսևորումը իրականացվել է կազմակերպության աշխատողի կողմից կամ նրա անտարբերության կամ անգործություն դրսևորելու արդյունքում, ապա կազմակերպության աշխատողը ենթարկվում է կարգապահական պատասխանատվության՝ օրենքով սահմանված կարգով:

III. ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՈՒՄԸ ԵՎ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ԱՆՁԱՆՑ ՀԵՏ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

13. Կազմակերպություններում շահառուների նկատմամբ բռնության ցանկացած դրսևորում՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական, ինչպես նաև

նրանց նկատմամբ անուշադիր, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքը և սոցիալական մեկուսացումը (բոլորը միասին՝ բռնության դրսևորումներ) բացառելը, այդ երևույթները կանխարգելելը պետք է լինեն կազմակերպությունների գործունեության գերակա ուղղություններից մեկը:

14. Կազմակերպություններում շահառուների նկատմամբ բռնության դրսևորումները կանխարգելելու նպատակով անհրաժեշտ է իրականացնել հետևյալ միջոցառումները՝

1) խնամքի ծառայությունների տրամադրման հավասար հասանելիության ապահովում,

2) ծառայությունների մատուցման հասցեականության և որակի ապահովում,

3) շահառուների հանդեպ խտրական վերաբերմունքի բացառման ուղղությամբ աշխատանքների իրականացում,

4) շահառուների՝ իրենց իրավունքների ու ազատությունների մասին իրազեկվածության բարձրացում,

5) աշխատողների կողմից շահառուների անձն ու արժանապատվությունը հարգելը,

6) կազմակերպությունում բարոյահոգեբանական բարենպաստ միջավայրի և միջանձնային առողջ հարաբերությունների ձևավորումը, դրանց նպաստող միջոցառումների ձեռնարկումը, մասնավորապես՝ շահառուների հետ տարվող սոցիալ-հոգեբանական աշխատանքի բարելավում,

7) շահառուների զբաղվածության ապահովում, մարզական, մշակութային և այլ միջոցառումների կազմակերպում՝ նրանց նախասիրություններին համապատասխան,

8) բռնության տարբեր դրսևորումների, դրանց անթույլատրելիության և դրանց հետևանքների վերաբերյալ դասընթացների, սեմինարների, զրույցների անցկացում ինչպես կազմակերպության աշխատողների, այնպես էլ շահառուների համար,

9) կազմակերպությունում նախկինում տեղի ունեցած բռնության դրսևորումների բացահայտումը և մեղավոր անձանց նկատմամբ համապատասխան վարչական, կարգապահական տույժերի կիրառումը,

10) կազմակերպությունում առկա բոլոր վիճահարույց խնդիրների կամ շահառուներին անհանգստացնող դեպքերի, շահառուների՝ միմյանց, կամ շահառուների ու աշխատողների միջև ծագած կոնֆլիկտների, անհրաժեշտության դեպքում՝ նաև հրապարակային քննարկումը և համատեղ լուծումների վերաբերյալ որոշումների կայացումը:

15. Սույն կարգի 10-11-րդ կետերում նշված գործընթացի արդյունքում՝ բազմամասնագիտական թիմի կամ առանձին մասնագետների կողմից շահառուի նկատմամբ բռնության դեպքի հաստատման պարագայում կազմվում է բռնության ենթարկված անձի սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագիր (այսուհետ՝ Ծրագիր)՝ սույն հրամանով հաստատված ձևին համապատասխան: Ծրագրում ներառվում են դեպքի վերաբերյալ տվյալներ, ինչպես նաև խնդրահարույց տարբեր

մասնագետների համատեղ մասնակցությամբ, այնպես էլ անհատական մասնագիտական օգնության ու խորհրդատվության հետ կապված միջոցառումներ:

16. Ծրագրում հստակ նշվում է բռնության տեսակը և յուրաքանչյուր մասնագետ իր մասնագիտական հմտությունների ու կարողությունների շրջանակում և իրեն հայտնի մեթոդաբանությամբ (դիտարկում, զրույց, խորը հարցազրույց, խորհրդատվություն, վերականգնողական թերապիա և այլն) իրականացնում է համապատասխան միջոցառումներ բռնության ենթարկված շահառուի սոցիալ-հոգեբանական վերականգնման, անհրաժեշտության դեպքում՝ բժշկական օգնության ստացման և վերջնական ապաքինման նպատակով:

17. Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացման վերաբերյալ մասնագետները գրառումներ են կատարում նաև կատարում շահառուի անհատական սոցիալական քարտում, որը պահվում է շահառուի անձնական գործում:

18. Շահառուի ցանկությամբ, կարող են բռնության դրսևորումների հետ կապված որոշակի տվյալներ չգրանցվել նրա անհատական սոցիալական քարտում, այլ նշվեն միայն ընդհանրական տեղեկություններ դեպքի մասին:

19. Մինչև Ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, բռնության՝ արդեն հաստատված փաստի հիման վրա, բռնության ենթարկված անձը և բռնարարը առանձնացվում են, որից հետո միայն սկսում իրականացնել Ծրագրով նախատեսված միջոցառումները:

20. Մասնագետներն աշխատում են ոչ միայն բռնության ենթարկված շահառուի, այլ նաև՝ բռնարարի հետ:

21. Բռնության ենթարկված անձանց հետ աշխատանքի արդյունավետության նպատակով, և ելնելով շահառուի ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանման ու վերականգնման անհրաժեշտությունից, մասնագետը կարող է համագործակցել կազմակերպության այլ մասնագետների, կազմակերպությունից դուրս այլ մասնագիտացված մարմինների մասնագետների հետ, անհրաժեշտության դեպքում, շահառուի համաձայնությամբ կարող է նրան ուղղորդել մասնագիտացված օգնություն ցուցաբերող այլ կազմակերպություններ: Այլ կազմակերպություն շահառուի ուղղորդման գործընթացը համաձայնեցվում և կազմակերպվում է կազմակերպության տնօրենի հետ:

22. Սույն հրամանի պատշաճ կատարման համար պատասխանատվություն է կրում կազմակերպության տնօրենը:

Հավելված N 2
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2021 թ. 09 նոյեմբերի ի N 11-Ա/հրամանի

ՁԵՎ
ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆԻ

Հ/հ	Բռնության դեպքի վերաբերյալ տեղեկատվության ստացման կամ բռնության դեպքի հայտնաբերման օրը, ամիսը, տարին	Ում կողմից է ստացվել տեղեկատվությունը կամ ում կողմից է հայտնաբերվել բռնության դրսևորման փաստը	Բռնության ենթարկված անձի անուն, ազգանուն, հայրանուն	Բռնության տեսակը, նշել՝ ֆիզիկական, հոգեբանական, սեռական և այլ	Ում կողմից է հաստատվել բռնության փաստը (նշել պաշտոնը և անուն, ազգանունը)	Բժշկական օգնության անհրաժեշտություն եղել է, թե՝ ոչ, եթե այո, նշել ինչ օգնություն: Նշել՝ օգնությունը ցուցաբերվել է կազմակերպությունում, թե շահառուն տեղափոխվել է ստացիոնար բժշկական հաստատություն	Առաջին հերթին ինչ աջակցություն է ցուցաբերվել բռնության ենթարկված շահառուին և ում կողմից	Սոցիալ-հոգեբանական օգնության անհրաժեշտություն կա, թե՝ ոչ, եթե այո՝ ինչ է ձեռնարկվել	Բռնության դրսևորումը եղել է շահառուի կողմից, թե աշխատողի	Բռնության դեպքով բացահայտված մեղավորներ կան, թե՝ ոչ, եթե այո՝ ինչ միջոցներ են ձեռնարկվել	Դեպքի վերաբերյալ կազմակերպությունը իրազեկել է ոստիկանություն, թե՝ ոչ; եթե այո՝ ինչ հիմքով, եթե ոչ՝ հիմնավորել	Գրանցումը կատարողի պաշտոնը, անուն, ազգանունը և ստորագրությունը
1.												
...												

Հավելված N 3
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2021 թ. 09 նոյեմբերի ի N 171-Ա/Ն հրամանի

ՁԵՎ
ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՇԱՀԱՌՈՒՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ

Կազմակերպության անվանումը

Հաշվետու ժամանակահատվածը ——————————————

Տարեթիվը և եռամսյակը

Հաշվետու ժամանակահատվածում շահառուների նկատմամբ իրականացված (հաստատված) դեպքերի թիվը	Բռնության տեսակը (ֆիզիկական, հոգեբանական, սեռական, տնտեսական և այլն)	Բռնության ենթարկված անձի սեռը՝ կին/տղամարդ, տարիքը	Ում կողմից է ենթարկվել բռնության՝ այլ շահառուի/աշխատողի	Բժշկական օգնության անհրաժեշտություն եղել է, թե՝ ոչ; Եթե այո՝ կազմակերպությունում, թե շահառուն տեղափոխվել է ստացիոնար ԲԿ	Դեպքի մասին իրազեկվել է ոստիկանություն, թե՝ ոչ: Եթե այո՝ երբ (նշել ամիս, ամսաթիվ)	Սոցիալ-հոգեբանական վերականգնման ծրագիր կազմվել է, թե՝ ոչ	Բռնարարը կարգապահական կամ այլ պատասխանատվության ենթարկվել է, թե՝ ոչ; Եթե այո՝ նշել ինչ պատասխանատվության	Ծանոթություն

Կազմակերպության տնօրեն՝ ——————————————

ստորագրություն, անուն, ազգանուն

Պատասխանատու՝ ——————————————

ստորագրություն, անուն, ազգանուն

Հավելված N 4

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի
2021 թ. 09 դեկտեմբերի N 177-Ա հրամանի

ՁԵՎ

ԲՌՆՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿՎԱԾ ՇԱՀԱՌՈՒԻ ՍՈՑԻԱԼ-ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԾՐԱԳՐԻ

1. Բռնության ենթարկված շահառուի ազգանունը, անունը, հայրանունը _____

2. Սեռը _____

3. Ծննդյան տարեթիվը _____

4.Նշել բռնության տեսակը, որին ենթարկվել է շահառուն, համառոտ նկարագրել բռնության դրսևորումը, վայրը, ժամանակը, ում կողմից է իրականացվել և այլ տվյալներ _____

_____

_____

_____

_____

5. Շահառուի ֆիզիկական վիճակը (լրացնում է բժիշկը) _____

_____

6.Շահառուի հոգեբանական վիճակը (լրացնում է հոգեբանը)_____

_____

_____

_____

7. Շահառուի կարիքները՝

1) սոցիալական _____

_____

_____

_____

2) հոգեբանական _____

_____

_____

_____

3) բժշկական _____

_____

_____

_____

_____

8. Այլ (եթե նշում է շահառուն)_____

_____

9. Շահառուի սոցիալ-հոգեբանական վերականգնմանն ուղղված միջոցառումներ՝

1) սոցիալական վերականգնմանն ուղղված միջոցառումներ

Միջոցառման անվանումը	կատարողը	ժամկետը	Ակնկալվող արդյունքը

2) հոգեբանական վերականգնմանն ուղղված միջոցառումներ

Միջոցառման անվանումը	կատարողը	ժամկետը	Ակնկալվող արդյունքը

3) բժշկական վերականգնմանը և զարգացմանն ուղղված միջոցառումներ

Միջոցառման անվանումը	կատարողը	ժամկետը	Ակնկալվող արդյունքը

4) այլ (նշել՝ օրինակ՝ հոգևոր, մշակութային և այլն, եթե կա անհրաժեշտություն)

_____

_____

Ծրագիրը կազմողների պաշտոնը, անունը, ազգանունը, ստորագրությունը

1. _____

2. _____

3. _____

4. _____

Լրացնելու ամսաթիվը _____